այստեղ, սրբագրելով Տէր Յովանէսեանցի պակասաւոր հրատարակութիւնը.

«ԱՅՍ Է ՇԻՐԻՄ ԴԱՄԲԱՐԱՆԻ
ԽՕՋԱՑ ՍԱՓԱՐ ԻՇԽԱՆ ԲԱՐԻ
ՈՐ Է ԵԴԵԱԼ ԱՅՍ Տ(Ա)ՊԱՆԻ։
ԷՐ ՍԱ ԱՄԱՅ ԾԵ·Ի (55),
ԹՎԻՆ ՀԱՅՈՑ Ռ· ԱՄԻ
ԿԷ ՕԵԼՈՐԴԻ·
ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՊԱՌ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ·
ՍԱ ՕԱՆԴԵԱՅ ԱՌ Տ(Է)Ր Հ(Ո)ԳԻ·
Ք(ՐԻՍՏՈ)Ս Ա(ՍՏՈՒԱ)Ծ ԻՒՐՆ ՈՂՈՐՄԻ»։

Նոյն թուականին, Նոր Զուղայի Խոջէնց Ս· Գէորգ եկեղեցւոյն խորանին պատուանդանին քարին մէկ երեսին վրայ արձանագրուած գտայ.

«ԽՁՍ ՅՇՏԿ Է – ՍՈՒԼԹԱՆ Փ – ԱՇԷ» (*երեք տողի վրայ*), *այսինքն՝* «Խաչս յիշատակ է Սուլթան Փաշէ»։

Գտայ նաեւ Խոջայ Սաֆարի կնոջ Սուլթանփաշէի տապանաքարը, նոյնպէս Նոր Զուղայի գերեզմանատան մէջ, ուր թաղուած է 1607*ին.*

«ԱՅՍ Է ՀՆԳՍՏՍ
ՍՈԼԹԱՅՆՓԱՇԷ
ԵՒ ԿՂԿՑ ԽՕՋԱՅ
ՍԱՓԱՐԻՆ
ԹՎԻՆ ՌԾԶ»

Այսինքն՝ «Այս է հանգստարան Սոլթայնփաշէ եւ կողակից Խոջայ Սաֆարին, թվին ՌԾԶ (= 1607)»։

Խոջայ Սաֆար իր հօր Խոջայ Խաչիկի Յայսմաւուրքին մէջ 1604*ին յիշուելէ զատ, ուրիշ ձեռագիրներու մէջ ալ կը յիշատակուի։ Այսպէս, իմ հաւաքմանս թիւ* 140 *Յայսմաւուրքին մէջ, ուր մաս մը* (37 *թերթ*), *գրուած է Խոջայ Վաթանի համար, կը կարդանք այսպէս.* «... *ստացողի գրոցս Խաւջայ Նազարին եւ կողակցին իւրոյ· որդւոցն Պարոն Սարգիսին, Էլիազին, Վաթանին· եւ եղբօրն՝ Խաւջայ Սաֆարին եւ ծնաւղացն Խոջայ Խաչիկին, Մամին*»։ *Ձեռագիրը* 1659 *թուականէն է, ուրեմն՝ Խոջայ Սաֆարի մահէն բաւական վերջ գրուած։*

Իր գերդաստանին համար շատ կարեւոր է իր որդւոյն «Պարոնաց պարոն» Զալալ Բէկին յիշատակարանը, զոր կը ներկայացնեմ